08.11.2017, Panorama.am լրատվական
https://www.panorama.am/am/news/2017/11/08/%D4%B3%D6%87%D5%B8%D6%80%D5%A3%D5%8E%D5%A1%D6%80%D5%A4%D5%A1%D5%B6%D5%B5%D5%A1%D5%B6/1862405#.WgLUNkHRNCY.facebook

Գիտնականների և մասնավոր հատվածի համագործակցության մշակույթը դեռ ձևավորված չէ.

Գևորգ Վարդանյան

«Հայաստանում գիտության զարգացման առջև ծառացած կարևոր խնդիրներից մեկը մասնավոր հատվածի հետ համագործակցության բացակայությունն է»,- այս մասին այսօր Գիտությունների ազգային ակադեմիայում կազմակերպված կլոր-սեղան քննարկման ժամանակ Panorama.am-ի հետ զրույցում ասաց ԳԱԱ Երիտասարդ գիտնականների խորհրդի նախագահ Գևորգ Վարդանյանը:

Նրա խոսքով՝ աշխարհում արդեն ընդունված փորձ է, որ գիտությունը և մասնավոր հատվածը բավականին արդյունավետ աշխատում են, և արդյունքում մեծ գումարներ է վաստակում թե մասնավորը, թե գիտնականը, քանի որ համատեղ ներկայացված գիտական արդյունքն առևտրայնացման ենթական է լինում:

«Այսօրվա հանդիպմանը կքննարկվեն մասնավոր հատվածի և գիտակրթական հիմնադրամների դերը գիտության զարգացման գործում, նրանց՝ գիտության մեջ ներգրավելու ուղիները, երիտասարդ գիտնականների արտահոսքի պատճառները և առաջարկվող լուծումները: Մասնավորապես կներկայացվեն Սփյուռքահայ գիտնականների ասոցիացիայի (ASDA), Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի (FAST), Հայ օգնության ֆոնդի Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամի (ANSEF) գործունեությունը, դերը գիտության և կրթության զարգացման գործում և երիտասարդ գիտնականների առաջընթացի համար նրանց ընձեռած հնարավորությունները»,- նշեց մեր զրուցակիցը:

Հարցին, թե Հայաստանում գիտնականների ու մասնավոր հատվածի օրինակներ չու՞նենք, Երիտասարդ գիտնականների խորհրդի նախագահը պատասխանեց. «Դեռ կուլտուրան ձևավորված չէ: Իմ սուբյեկտիվ կարծիքով, մասնավոր հատվածը՝ բիզնեսմենը, ցանկանում է արագ գումար վաստակել, իսկ գիտության մեջ պետք են տարիներ, որ փորձարկումների արդյունքում ստանանք նախատիպեր, որը ենթակա կլինի առևտրայնացման: Ահա այս մշակույթը եթե կարողանանք մտցնել մեր բիզնեսմենների մեջ, ապա կունենանք փայլուն արդյունքներ»:

Գևորգ Վարդանյանը նշեց, որ բիզնեսմենին պետք է համոզել, որ այդ համագործակցությունը վստահելի է, արդյունավետ. «Մարդիկ ուղղակի հավատ չունեն, որ ներդրում անեն, օգուտ կունենան: Այսպիսի համաժողովների, կլոր-սեղանների միջոցով ցանկանում ենք ներկայացնել աշխարհի փորձը՝ գիտնական-բիզնեսմեն համագործակցության, դեղագործության, SS, ինժեներիայի և այլ ոլորտներում»:

Կլոր սեղան-քննարկումն անցկացվում է Երկրորդ համահայկական գիտական համաժողովի շրջանակներում: Համաժողովին մասնակցում են հայազգի գիտնականներ, սփյուռքից՝ ԱՄՆ-ից, եվրոպական երկրներից, Կանադայից և Ռուսաստանից:

Համաժողովն իրականացվում է ՀՀ նախագահի աշխատակազմի կողմից ՀԿ-ներին տրամադրվող դրամաշնորհային ծրագրի և «Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հայտարարած մրցույթի շրջանակներում՝ «Երիտասարդ նորարարների և գիտնականների ասոցիացիա», «Երիտասարդ կենսաբանների ասոցիացիա», «Համահայկական գիտական ասոցիացիա» ՀԿ-ների և «Երիտասարդ գիտնականների աջակցություն ծրագրի» համագործակցությամբ: